ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐ

Է. ԳՐԻԳՈՐՅԱՆ

«23» 08 2018թ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 71

Ձեռնարկողը՝ ***<<ԽԱՉՀԱՐ>> ՍՊԸ***
Ք. Երևան, Հովսեփյան 95ա

Գործունեությունը՝ ***Շինարարական թափոնների վերամշակման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն***
ք. Երևան

<<Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն>> ՊՈԱԿ-ի
տնօրենի ժ/պ՝ Ռ. Ոսկանյան

Առդիր եզրակացությունը՝ 3 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 71

«23» 08 2018թ.

«ԽԱՉՀԱՐ» ՍՊԸ կողմից ներկայացված շինարարական թափոնների վերամշակման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Պատվիրատու՝	«ԽԱՉՀԱՐ» ՍՊԸ,
Նախագծող՝	<<Էկոբարիք-Աուդիտ>> ՍՊԸ,
Ներկայացված նյութեր՝	Գնահատման հաշվետվություն /ՇՄԱԳ/,
Տեղադրման վայրը՝	Ք. Երևան, Արտաշատի խճուղի 1, նրբանցք 6/2,
Գործունեության կատեգորիան	/Ա/ կատեգորիա,

Համաձայն ներկայացված աշխատանքային նախագծի և շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության «ԽաչՀար» ՍՊԸ-ն զբաղվում է ճանապարհաշինարարական, վերանորոգման և շահագործման աշխատանքներով: Նշված աշխատանքներն իրականացնելու համար իր ենթակայության տակ ունի ասֆալտ-բետոնի, բետոնի, խճի մանրեցման, քարի փոշու չորացման տեղամաս և բիտումային էմուլսիայի պատրաստման արտադրամասեր:

«ԽաչՀար» ՍՊԸ արտադրական տարածքը գտնվում է Երևան քաղաքի հարավային ծայրամասում, արդյունաբերական շրջանում: Ընկերությունը գործունեություն է ծավալում 2001թ-ից:

Ընկերությունը նախատեսում է շինարարական թափոնների (կտորների տեսքով ասֆալտբետոնե խառնուրդների, շենքերի մասնատման) վերամշակման աշխատանքներ:

Վերոնշյալ աշխատանքները չկատարելու դեպքում շինարարական թափոնների ամբողջ ծավալը պետք է ուղղվի շինարարական աղբավայր: Շրջակա միջավայրը շինարարական թափոններով չաղտոտելու նպատակով ընկերությունը որոշում է կայացրել կազմակերպել շինարարական թափոնների վերամշակման աշխատանքներ:

Վերամշակման ենթակա թափոնների ակնկալվող տարեկան ծավալները կազմում են՝

- ասֆալտբետոնե խառնուրդների թափոններ-100,000տ/տարի

- շենքերի քանդման /մասնատման/ թափոններ - 200,000տ/տարի:

Նշված աշխատանքները իրականացվելու են բացառապես ընկերության հաշվեկշռում առկա տեխնիկական միջոցներով:

Շինարարական աշխատանքների ընթացքում առաջանում են կտորների տեսքով ասֆալտբետոնե խառնուրդների թափոններ, որոնք բեռնատար մեքենաներով պետք է տեղափոխեն ընկերության արտադրական բազա և պահեստավորվեն ըստ տեսակի: Այնուհետև կատարվում են հետևյալ պրոցեսները՝ շենքերի մասնատման թափոնները, որոնք հիմնականում պարունակում են քար և բետոն, գիպսային միացություններ, երկաթ, ավազ, փայտանյութ, տեսակավորվում են: Քար և բետոնյա իրերը ուղղվում են մանրեցման հանգույց, որտեղ մանրեցվելուց հետո ուղարկվում են իներտ նյութերի կուտակման հրապարակ: Մանրեցված արտադրանքը կարող է օգտագործվել բետոնյա իրերի և ասֆալտ-բետոնի արտադրության մեջ: Երկաթը և փայտանյութը կարող են օգտագործվել շինարարական աշխատանքների պրոցեսում՝ որպես երկրորդային հումք:

Ելնելով արտադրական անհրաժեշտությունից այն պետք է վերամշակվի ասֆալտ-բետոնե հոսքագծերում և ստացվի պատրաստի ասֆալտ-բետոնե արտադրանք:

«ԽաչՀար» ՍՊԸ արտադրության գործընթացում մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերի հիմնական աղբյուր են հանդիսանում հետևյալ պրոցեսները՝

- N 1, 2 ասֆալտ-բետոնի հանգույցները,
- Բիտումի պահպանման, տաքացման հանգույցը,
- Բետոնի հանգույցը,
- Բետոնե իրերի պատրաստման տեղամասը,
- Խճի ջարդման և մանրեցման հանգույցը,
- Իներտ նյութերի կուտակման բաց հրապարակը /խիճ, ավազ/,
- Քարի փոշու չորացման տեղամասը,
- Բիտումային էմուլսիայի պատրաստման տեղամասը:

Շինարարական թափոնների վերամշակման աշխատանքները իրականացնելու ընթացքում ջուրն օգտագործվում է իներտ նյութերի կուտակման պահեստի, ինչպես նաև ինժեներատեխնիկական անձնակազմի, բանվորների և վարորդների կոմունալ կենցաղային կարիքների ապահովման համար:

Ընկերության ջրամատակարարումը և ջրահեռացումը իրականացվում է միանալով քաղաքային համանուն ցանցերին:

Հաշվետվությունում ներկայացված են ազդեցությունների նվազեցմանն ու կանխարգելմանը ուղղված միջոցառումներ, որոնց արդյունքում արտանետումները կլինեն թույլատրելի նորմերի սահմաններում:

Գործունեության իրականացման ընթացքում նախատեսվում է շրջակա միջավայրի մոնիթորինգ՝ այդ նպատակով նախատեսվում է պայմանագիր կնքել մասնագիտացված բնապահպանական կազմակերպության հետ, որը ասֆալտգործարանի տարածքում և մոտակա զգայուն կլանիչի մոտ (տուն, հանրային օբյեկտ) կկատարի նմուշառում և ածխաջրածնի, փոշու, ազոտի ու ծծմբի երկօքսիդի պարունակության որոշում: Մոնիթորինգի միջոցառումների պարբերականությունը կլինի եռամսյակային, չափումների արդյունքները կգրանցվեն մոնիթորինգի մատյանում:

Եզրահանգում՝ Նախատեսվող գործունեության իրականացման դեպքում տարբեր վայրերում՝ առաջացող շինարարական թափոնները կտեղափոխվեն ընկերության տարածք և կվերամշակվեն, ինչը հնարավորություն կտա դրանք հետագայում օգտագործել շինարարական գործընթացներում: Գործունեության իրականացումը կկանխի շինարարական թափոնների կուտակումը աղբավայրերում և դրանցով շրջակա միջավայրի աղտոտումը: Նախատեսվող գործունեության իրականացման վերաբերյալ կազմակերպվել են չորս հանրային քննարկումներ, որոնց արդյունքում մասնակիցները և ազդակիր համայնքը նախատեսվող գործունեության իրականացմանը հավանություն են տվել:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

<<ԽաչՀար>> ՍՊԸ կողմից ներկայացված շինարարական թափոնների վերամշակման աշխատանքների գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն:

Տնօրենի տեղակալ՝ Ա. Դոնոյան

Մասնագետ՝ Ա. Մինասյան